

ՎԻՍԿՈՉՈՄԵՏՐԱՅԻ ԵՎ ՉԼՅՈՒԿՈՉԱՅԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ՁՈՒՄՊԱՐԵՂՈՒԿՈՒՄ ՈՐՊԵՍ ՄԱՅՎԱՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ (փորձարարական հետազոտություն)

Ավագյան Ս.Ա.¹, Զիլֆան Ա.Վ.¹, Կիրակոսյան Գ.Վ.¹, Վարդանյան Շ.Ա.²,
Բաբայան Ա.Է.², Ասատյան Ա.Գ.¹

¹ Երևանի Մ. Հարացու անվ. պետական բժշկական համալսարանի ԳՀԿ, Երևան, Հայաստան
² Երևանի Մ. Հարացու անվ. պետական բժշկական համալսարանի դատական բժշկության ամբիոն
Երևան, Հայաստան

Ինչպես հայտնի է, ձուլապահեղուկի մածուցիկությունը հիմնականում պայմանավորված է նրա կազմության մեջ մտնող բարձր պոլիմերային գլիկոզամինոգլիկաններով և առաջին հերթին՝ հիալուրոնաթթվով:

Հարկ է նշել, որ ինքալուծանքային ռեակցիաների ընթացքում ձուլապահեղուկը, ժամանակային որոշակի հատվածներում, հողերի ձուլապային միջավայրի բաղադրիչ տարրերում առաջացող ինքնալուծանքային գործընթացների առանձնահատկությունների որոշման առումով, դատական բժշկության պրակտիկայում որպես հատուկ հետազոտության առարկա, նախկինում չի ծառայել:

Ձուլապահեղուկի վիսկոզոմետրիկ բնութագիրը, մեր տեսանկյունից, հնարավոր է, որ լինի բավականին տեղեկատվական՝ մահվան վաղեմության ժամկետների որոշման ժամանակ, քանի որ հողերի ձուլապային միջավայրի բաղադրիչ տարրերում առաջացող ինքնալուծանքային գործընթացները չեն կարող չարտացոլվել գլիկոպրոտեինային համալիրների կառուցվածքային բնութագրում, որոնք պայմանավորում են ձուլապահեղուկի մածուցիկության վիճակը:

Նշված առումով, առաջին հերթին անհրաժեշտ է որոշել ձուլապահեղուկի մածուցիկության ցուցանիշների փոփոխությունների դինամիկան, կախված՝ մահվան վաղեմության ժամկետներից: Որպես ուսումնասիրության օբյեկտ հանդիսացել է՝ թվով 16 սեռահասուն, 5 տարեկան կովերի ծնկային հողերից վերցված ձուլապահեղուկը:

Ձուլապահեղուկի մածուցիկության հատկությունների իջեցումը պայմանավորված է հիալուրոնաթթվի ապապոլիմերիզացմամբ, կամ էլ՝ հիալուրոնաթթվի պոլիմերիզացման գործընթացների խանգարման հետևանքով ցածր պոլիմերային հիալուրոնատների առաջացմամբ, ինչը կախված է տարբեր գործոններից:

Վիսկոզոմետրիայի ցուցանիշները բավականին տեղեկատվական եղան մահվան վաղեմության որոշակի ժամկետների որոշման համար, քանի որ կենդանիների մորթից հետո, առաջին հինգ օրերի ընթացքում հստակ նկատվեց տեղաշարժերի դինամիկա, որն արտահայտվում էր ձուլապահեղուկի մածուցիկության ցուցանիշների հաստատուն բարձրացումով:

OFFICIAL PUBLICATION OF THE YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY